ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Ս. Աղայան

«07» հուլիսի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԺՁ.00.01-«Անասնաբուժություն» մասնագիտությամբ անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Ջոն Տիգրանի Սիմոնյանի «Մեղուների վարակիչ հիվանդությունների ուսումնասիրումը Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսության վերաբերյալ:

Կարծիքը քննարկվել է Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտխորհրդի 06.07.2026թ. կածացած թիվ 10 նիստում: Ներկա էին գիտխորհրդի 18 անդամ՝ Ս. Աղայան, Գ. Գևորգյան, Հ. Խաչատրյան, Բ. Գաբրիելյան, Մ. Քալաշյան, Է. Ղուկասյան, Ի. Խորոզյան, Վ. Ասատրյան, Մ. Դալաքյան, Գ. Կարագյան, Լ. Համբարյան, Ս. Հակոբյան, Մ. Վարդանյան, Հ. Գևորգյան, Վ. Սպանգենբերգ, Ն. Զարիկյան, Մ. Ղասաբյան, Ռ. Պետրոսյան:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Ջոն Տիգրանի Սիմոնյանի ատենախոսությունը նվիրված է «Մեղուների վարակիչ հիվանդությունների ուսումնասիրումը Հայաստանի Հանրապետությունում»: Ներածությունում հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ներկայացրել է խնդրի ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպել է աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ինչպես նաև գործնական նշանակությունը:

Ատենախոսությունը շարադրված է 123 տպագիր էջի վրա, ներառում է 15 աղյուսակ, 5 գծապատկեր, 7 նկար, 1 քարտեզ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ 5 ենթագլուխներով և սեփական հետազոտությունների արդյունքների ամփոփից, ինչպես նաև եզրակացություններից, եզրափակիչ դրույթներից, գործնական առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 141

աղբյուր, այդ թվում՝ 136 տպագիր և 5 ինտերնետային աղբյուր. Աշխատանքը համալրված է 4 հավելվածով:

Նշվել են աշխատանքի փորձագնահատման և հրապարակումների վերաբերյալ տվյալները: Ատենախոսության նյութերը հրատարակվել են 4 գիտական հոդվածներում (բոլորը գրախոսվող ամսագրերում), որոնցում լիովին արտացոլված են աշխատանքի հիմնադրույթները:

Թեմայի արդիականությունը

Մեղվաբուծությունը գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է, որը ոչ միայն ապահովում է բարձրարժեք սննդամթերքի արտադրությունը, այլև առանցքային դեր է կատարում գյուղատնտեսական և վայրի բույսերի փոշոտման գործընթացում: Մեղվաընտանիքների առողջության պահպանումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն մեղվաբուծության զարգացման, այլև կենսաբազմազանության պահպանման, էկոհամակարգերի կայունության և պարենային անվտանգության ապահովման համար:

Վերջին տարիներին աշխարհի բազմաթիվ երկրներում նկատվում է մեղուների վարակիչ հիվանդությունների տարածվածության աճ, որն ուղեկցվում է մեղվաընտանիքների թվաքանակի և արտադրողականության նվազմամբ: Այս իրավիճակը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առանձնահատուկ նշանակություն ունեն կլիմայական փոփոխությունները, կերային բազայի վատթարացումը, թունաքիմիկատների կիրառումը, մեղվաբուծության ինտենսիվացումը, ինչպես նաև մեղվաընտանիքների միջմարզային տեղափոխումները և միգրացիաները: Հարուցիչների տարածման գործում էական դեր են խաղում նաև մեղուների պահվածքի առանձնահատկությունները, և մեղվաընտանիքների չվերահսկվող տեղափոխումները, հարևան տարածաշրջաններից ու երկրներից հիվանդությունների հարուցիչների ներթափանցման հնարավորությունը:

Մեղվաբուծության համար առանձնահատուկ վտանգ են ներկայացնում վիրուսային և բակտերիալ ծագման վարակիչ հիվանդությունները, որոնք կարող են հանգեցնել մեղվաընտանիքների թուլացման, դրանց արտադրողականության նվազման և զանգվածային անկման: Նման հիվանդությունների տարածումը զգալի տնտեսական վնաս է հասցնում մեղվաբուծական տնտեսություններին և պահանջում է մշտական էպիզոոտոլոգիական վերահսկողություն:

Չնայած խնդրի արդիականությանը՝ մեղուների վարակիչ հիվանդությունների տարածվածությանը, համաճարակաբանական գործընթացի առանձնահատկություններին և հիվանդացության տարածաշրջանային կառուցվածքին նվիրված համակարգված ուսումնասիրություններ կատարվել են սահմանափակ ծավալով: Ոչ լիարժեք են ուսումնասիրված մեղուների ինֆեկցիոն հիվանդությունների աշխարհագրական

տարածման, դրանց առաջացման ռիսկի գործոնների և ժամանակակից պայմաններում զարգացման օրինաչափությունների վերաբերյալ հարցերը:

Այս առումով, մեղուների վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական իրավիճակի ուսումնասիրությանը, դրանց տարածման գործոնների բացահայտմանը և արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների մշակմանը միտված հետազոտությունների իրականացումը, ինչպիսին հանդիսանում է Ջոն Տիգրանի Սիմոնյանի կողմից ներկայացված աշխատանքը, արդիական է և ունի կարևոր գիտական ու գործնական նշանակություն մեղվաբուծության ոլորտի հետագա զարգացման համար:

Աշխատանքի բովանդակության համառոտ նկարագրություն

Առաջին գլխում ներկայացված է գրականության վերլուծությունը, ներառյալ տարածաշրջանի կլիմայական և գյուղատնտեսական առանձնահատկությունները, մեղվաբուծության զարգացման արդի վիճակը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում, ինչպես նաև ոլորտի պատմական զարգացումը: Դիտարկվում են մեղուների վիրուսային հիվանդությունները և դրանց փոխանցման ուղիները, վարակի աղբյուրները, պեստիցիդների ազդեցությունը մեղուների վրա: Առանձին ուշադրություն է դարձված հիվանդությունների կանխարգելման և բուժման իրավական հիմքերին, վերլուծվում են տարբեր տարիներին ընդունված նորմատիվ իվական ակտերը: Նշվում է նաև, որ երկրում բացակայում է մեղուների հիվանդությունների բուժման համար նախատեսված դեղամիջոցների տեղական արտադրությունը:

Երկրորդ գլխում ներկայացված են հետազոտության նյութն ու մեթոդները: Նկարագրված է հետազոտության տարածքը, նշված են նմուշառման կետերը: Բերված են կիրառված լաբորատոր մեթոդները՝ էպիզոոտոլոգիական, պաթոլոգաանատոմիական, մանրէաբանական և մոլեկուլագենետիկական, որոնք թույլ են տվել բացահայտել վարակիչ հարուցիչների առկայությունը: Տվյալների վիճակագրական մշակման համար կիրառվել են մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ:

Երրորդ գլխում ներկայացված են սեփական հետազոտությունների արդյունքները: Հեղինակը մանրամասն նկարագրում է հետազոտված մեղվաընտանիքների բակտերիալ վարակվածությունը և տարբեր հակաբիոտիկ խմբերի նկատմամբ դրանց դիմադրողականությունը:

Առաջին ենթագլխում քննարկվում են մեղուների վարակիչ հիվանդությունների աղբյուրներն ու տարածման ուղիները: Նշվում է մեղվաբուծության կազմակերպման առանձնահատկությունների, կլիմայական գործոնների և հարևան երկրներից վարակների ներմուծման ազդեցության մասին:

Երկրորդ ենթագլխում ներկայացված են տարածաշրջանում մեղուների վարակիչ հիվանդություների վերաբերյալ համաճարակաբանական իրավիճակը: Նշվում է, որ

առաջին անգամ պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով իրականացվել է մեղուների վիրուսային վարակների ուսումնասիրություն:

Երրորդ ենթագլխում ներկայացված են հայտնաբերված հիվանդությունների տարածվածության վիճակագրական վերլուծության տվյալները:

Չորրորդ ենթագլխում կատարվել է վարակիչ հիվանդությունների հետևանքով առաջացած տնտեսական վնասի գնահատում: Պարզվել է, որ հետազոտվող տարածաշրջաններում ընդհանուր վնասը կազմել է ավելի քան 77 միլիոն դրամ:

Հինգերորդ ենթագլխում առաջարկվել են գործնական միջոցառումներ և կանխարգելման համակարգեր՝ ուղղված մեղուների վարակիչ հիվանդությունների նվազեցմանը

«Հետազոտությունների արդյունքների ամփոփում» բաժնում ատենախոսի կողմից կատարվել է հետազոտության արդյունքների համակողմանի վերլուծություն և քննարկում: Ստացված տվյալները համեմատվել են գրականության մեջ առկա տվյալների հետ, բացահայտվել են հիմնական օրինաչափությունները և ձևակերպվել են դրույթներ, որոնք հիմք են հանդիսացել եզրակացությունների և գործնական առաջարկությունների համար: Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի 4 գիտական հրապարակումներում:

Սեղմագիրը արտացոլում է ատենախոսության բովանդակությունը, հիմնական դրույթներն ու ստացված արդյունքները:

Գիտական նորույթը և գործնական նշանակությունը

Աշխատությունում առաջին անգամ տվյալ տարածաշրջանի համար իրականացվել է մեղուների վարակիչ հիվանդությունների համալիր համաճարակաբանական վերլուծություն՝ մոլեկուլային գենետիկական մեթոդների կիրառմամբ: Բացահայտվել են վիրուսային և բակտերիալ վարակների տարածման առանձնահատկությունները, հիմնական ռիսկի գործոնները, ինչպես նաև գնահատվել է դրանցից առաջացած տնտեսական վնասը: Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է մեղուների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և տարածումը սահմանափակելու վերաբերյալ առաջարկությունների մշակման մեջ, որոնք կարող են կիրառվել մեղվաբուծության և անասնաբուժական հսկողության պրակտիկայում: Ստացված արդյունքները կարող են նպաստել մեղվաընտանիքների համաճարակային բարեկեցության բարձրացմանը, տնտեսական կորուստների նվազեցմանը և մեղուների պոպուլյացիաների պահպանմանը: Մշակված առաջարկությունները կարող են օգտագործվել նաև մեղվաբուծության ոլորտի նորմատիվ իրավական դաշտի կատարելագործման նպատակով, այդ թվում՝ մեղվաբուծությունը և մեղուների առողջության պահպանությունը կարգավորող օրենսդրության փոփոխությունների և լրացումների մշակման գործընթացում:

Դիտողություններ

Չնայած աշխատանքի ընդհանուր դրական գնահատականին՝ անհրաժեշտ է նշել քննարկման ենթակա առանձին դիտարկումներ և անճշտություններ, մասնավորապես՝

1. Հետազոտության նպատակը ձևակերպված է բավական լայն և ներառում է մի շարք ուղղություններ, որոնք ըստ էության կարող են վերագրվել աշխատանքի խնդիրներին (քարտեզագրում, համաճարակաբանական վերլուծություն, տնտեսական վնասի գնահատում), իսկ հետազոտության որոշ խնդիրների ձևակերպումները, մասնավորապես, «կատարել լաբորատոր հետազոտություններ և համաճարակաբանական վերլուծություն» և «կատարել քարտեզագրման աշխատանքներ» կրում են առավելապես նկարագրական բնույթ և լիարժեք չեն արտացոլում հետազոտության համապատասխան փուլերի կատարման բովանդակությունը:
2. Նպատակահարմար է լրացնել «Նյութեր և մեթոդներ» բաժինը՝ հավաքված նյութի քանակական բաշխման վերաբերյալ տեղեկատվությամբ ըստ նմուշառման կետերի, ինչը հնարավորություն կտար ապահովել հետազոտության դիզայնի ավելի ամբողջական և կառուցվածքային ներկայացում:
3. Ատենախոսության մեջ հանդիպում են միկրոօրգանիզմների լատինական անվանումների տրանսկրիպցիոն ձևերի օգտագործման դեպքեր (օրինակ՝ էջեր 55, 56, 98 «էշերիխիա կոլի»՝ *Escherichia coli*-ի փոխարեն): Նպատակահարմար է ապահովել տերմինաբանության միատարրություն և օգտագործել միկրոօրգանիզմների լատինական բինոմային անվանումները:
4. Պետք է նշել, որ վիճակագրական ցուցանիշների (օր., թվաբանական միջին, ստանդարտ շեղում, օջախայնության գործակից և այլն) ներկայացումը տեքստային ձևով, մասնավորապես էջ. 102, 104) որոշ չափով նվազեցնում է տեսանելիությունը և դժվարացնում ստացված արդյունքների ընկալումը: Նպատակահարմար է տվյալների աղյուսակային կամ գրաֆիկական ներկայացումը:
5. Հաշվի առնելով ատենախոսության մեջ ներկայացված նյութի ծավալն ու բնույթը՝ անհրաժեշտ է հստակեցնել և ավելացնել եզրակացություններ: Մասնավորապես, էջ. 55-58, հեղինակի կողմից ներկայացվել են հայտնաբերված բակտերիալ հարուցիչների՝ հակաբիոտիկների նկատմամբ զգայունության հետազոտության արդյունքները, ինչը չի ընդգրկվել ատենախոսության առաջադրված խնդիրների շրջանակում, այնուամենայնիվ, ստացված արդյունքները կարող էին արտացոլվել եզրակացություններում որպես կատարված հետազոտության լրացուցիչ գիտական արդյունք:

Նշված թերությունները, սակայն, չեն նսեմացնում ատենախոսության արժեքը:

Եզրակացություն

Ատենախոսությունը հանդիսանում է ավարտուն գիտական հետազոտություն՝ նվիրված արդիական թեմայի, որը պարունակում է գիտական նորույթ և ունի գործնական նշանակություն: Ստացված արդյունքները կարևոր նշանակություն ունեն մեղուների վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական ուսումնասիրությունների և դրանց կանխարգելման համակարգի կատարելագործման համար:

Ջոն Տիգրանի Սիմոնյանի «Մեղուների վարակիչ հիվանդությունների ուսումնասիրումը Հայաստանի Հանրապետությունում» աշխատանքը իր ծավալով, կառուցվածքով և հետազոտությունների որակով համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող կամ ՀՀ աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակը՝ Ջոն Տիգրանի Սիմոնյանը արժանի է ԺՁ.00.01-«Անասնաբուժություն» մասնագիտությամբ անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Գրախոսներ՝

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Մոլեկուլային մակաբուծաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ Հ.Շ. Գևորգյան

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Ընդհանուր հելմինթոլոգիայի և մակաբուծաբանության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ Մ.Յ. Ռուխկյան

«Հ.Շ. Գևորգյանի և Մ.Յ. Ռուխկյանի ստորագրությունները ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ Հ.Գ.Խաչատրյան